# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**2022թ. դեկտեմբերի 16-ին, N 467 -Ա**
**ք. Աշտարակ**

ՀԱՅԿ ՅՈՒՐԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՇԵՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Շենավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի դեկտեմբերի 13-ին կայացած մրցույթի արդյունքները և Հ. Եղիազարյանի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Հայկ Եղիազարյանին 2022 թվականի դեկտեմբերի 16-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Շենավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 12/16/2022 16:41:07 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2022 թվականի N466-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 31 քաղաքացիների հատկացնել 1215000/ մեկ միլիոն երկու հարյուր տասնհինգ հազար / դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՁ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

VERIFIED OCSP 12/20/2022 17:54:20 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. Մովսիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2022թ.-ի դեկտեմբերի 16-ի N466-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ռուզաննա Խաչատրյան | Աշտարակ | 40000 | |
| 2 | Սիրակ Ղազարյան | Սասունիկ | 30000 | |
| 3 | Ռաֆիկ Ասլանյան | Աշտարակ | 30000 | |
| 4 | Քնար Խաչատրյան | Աշտարակ | 25000 | |
| 5 | Գայանե Թովմասյան | Արուճ | 30000 | |
| 6 | Սոնա Ասատրյան | Սասունիկ | 30000 | |
| 7 | Ռիմա Հովսեփյան | Բյուրական | 25000 | |
| 8 | Լեյլա Օզմանյան | Ալագյազ | 30000 | |
| 9 | Կլավդիյա Մկրտչյան | Ղազարավան | 40000 | |
| 10 | Համիկ Մարուքյան | Աշտարակ | 30000 | |
| 11 | Տիգրան Հարությունյան | Աշտարակ | 50000 | |
| 12 | Հովհաննես Միրզախանյան | Աշտարակ | 100000 | |
| 13 | Թեհմինե Առաքելյան | Սասունիկ | 30000 | |
| 14 | Սոնա Հայրապետյան | Ապարան | 30000 | |
| 15 | Քրիստինե Քոչարյան | Արագածոտն | 30000 | |
| 16 | Մերի Մկրտչյան | Արագածոտն | 30000 | |
| 17 | Գոհարիկ Ուռուտյան | Աշտարակ | 100000 | |
| 18 | Աստղիկ Սուքիասյան | Աշտարակ | 30000 | |
| 19 | Սոֆյա Հակոբյան | Օհանավան | 30000 | |
| 20 | Սյուզաննա Խաչատրյան | Օհանավան | 30000 | |
| 21 | Քնարիկ Թորոսյան | Ծաղկահովիտ | 30000 | |
| 22 | Կոստան Գալստյան | Աշտարակ | 50000 | |
| 23 | Գուրգեն Մկրտչյան | Փարպի | 50000 | |
| 24 | Խաչատուր Խաչատրյան | Արտաշավան | 50000 | |
| 25 | Ռադիկ Դարմանյան | Ագարակ | 100000 | |
| 26 | Գայանե Ռեյան | Սասունիկ | 30000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27 | Գևորգ Սահակյան | Աշտարակ | 30000 | |
| 28 | Նարինե Բոզոյան | Ագարակ | 20000 | |
| 29 | Արմինե Մկրտչյան | Ուջան | 30000 | |
| 30 | Օֆելյա Ղազարյան | Օշական | 25000 | |
| 31 | Սահակ Սահակյան | Ոսկեվազ | 30000 | |
| | Ընդամենը | | 1215000 | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ու Մ

---

**14 դեկտեմբերի 2022 թվականի N 465-Ա** **ք. Աշտարակ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանը՝ որոշում եմ.

1. Հաստատել 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանի 1-ին հավելվածով ներկայացված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական

հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) գրությամբ տեղեկացնել, որը պետք է պարունակի տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին:

6. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքները հրապարակել մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում:

8. 2023 թվականի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագիրը եռօրյա ժամկետում տեղադրել մարզպետարանի պաշտոնական կայքում:

9. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

10. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

X

VERIFIED OCSP 12/15/2022 10:47:52 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2022 թվականի դեկտեմբերի 14 -ի N 463 -Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1 | Ապարան | 2-րդ եռամսյակ | 1 Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության, առևտրի և ծառայությունների բնագավառներ,<br>2 Ֆինանսների բնագավառ<br>3 Քաղաքաշինության բնագավառ,<br>4 Հողօգտագործման բնագավառ,<br>5 Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ,<br>6 Արտակարգ իրավիճակների և քաղ. պաշտպանության բնագավառ,<br>7 Սոցիալական պաշտպանության բնագավառ, | ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ<br>1 ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ<br>2 ՖՍՏԶ վարչության գլխավոր մասանգետ<br>3 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետ<br>4 Հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ<br>5 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ | Խմբի ղեկավար՝ Հովհաննես Ասատրյան<br>1 Արմեն Կարապետյան<br>2 Կարեն Հովսեփյան<br>3 Արթուր Ավագյան<br>4 Գրիգոր Մանուկյան<br>5 Արթուր Շուխյան<br>6 Գայանե Անդրեասյան<br>7 Կարեն Թաթուլյան<br>8 Արշակ Ղազարյան<br>9 Գայանե Սահակյան<br>10 Սոֆյա Վարդազարյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 8 Տրանսպորտի բնագավառ<br>9 Կոմունալ տնտեսության բնագավառ<br>10 Մշակույթի և սպորտի բնագավառ<br>11 Կրթության բնագավառ<br>12 Առողջապահության բնագավառ<br>13 Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառ<br>14 Զբոսաշրջության բնագավառ | 6 Ջրահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետ<br>7 Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ<br>8 Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և կապի բաժնի գլխավոր մասնագետ<br>9 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ<br>10 ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ<br>11 ԿՄՍ վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ<br>12 Առողջապահության բաժնի պետ<br>13 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ | 11 Արմինե Սիմոնյան<br>12 Մերի Շահազիզյան<br>13 Թելման Թովմասյան<br>14 Գագիկ Պողոսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | 14 Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ | |
| **2** | Մեծածոր | 2-րդ եռամսյակ | 1 Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության, առևտրի և ծառայությունների բնագավառներ,<br>2 Ֆինանսների բնագավառ<br>3 Քաղաքաշինության բնագավառ,<br>4 Հողօգտագործման բնագավառ,<br>5 Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ,<br>6 Արտակարգ իրավիճակների և քաղ. պաշտպանության բնագավառ,<br>7 Սոցիալական պաշտպանության բնագավառ,<br>8 Տրանսպորտի բնագավառ<br>9 Կոմունալ տնտեսության բնագավառ<br>10 Մշակույթի և սպորտի բնագավառ<br>11 Կրթության բնագավառ<br>12 Առողջապահության բնագավառ<br>13 Շրջակա միջավայրի | ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ<br>1 ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ<br>2 ՖՍՏՁ վարչության գլխավոր մասանգետ<br>3 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետ<br>4 Հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ<br>5 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>6 Ջրահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետ<br>7 Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ | Խմբի ղեկավար՝ Հովհաննես Ասատրյան<br>1 Արմեն Կարապետյան<br>2 Կարեն Հովսեփյան<br>3 Արթուր Ավագյան<br>4 Գրիգոր Մանուկյան<br>5 Արթուր Շուխյան<br>6 Գայանե Անդրեասյան<br>7 Կարեն Թաթուլյան<br>8 Արշակ Ղազարյան<br>9 Գայանե Սահակյան<br>10 Սոֆյա Վարդազարյան<br>11 Արմինե Սիմոնյան<br>12 Մերի Շահազիզյան<br>13 Թելման Թովմասյան<br>14 Գագիկ Պողոսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պաշտպանության բնագավառ<br>14 Զբոսաշրջության բնագավառ | 8 Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և կապի բաժնի գլխավոր մասնագետ<br>9 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ<br>10 ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ<br>11 ԿՄՍ վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ<br>12 Առողջապահության բաժնի պետ<br>13 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ<br>14 Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ | |
| **3** | Արևուտ | 2-րդ եռամսյակ | 1 Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորության, առևտրի և ծառայությունների բնագավառներ,<br>2 Ֆինանսների բնագավառ<br>3 Քաղաքաշինության | ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ<br>1 ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ<br>2 ՖՍՏՁ վարչության գլխավոր մասանգետ | Խմբի ղեկավար՝ Հովհաննես Ասատրյան<br>1 Արմեն Կարապետյան<br>2 Կարեն Հովսեփյան<br>3 Արթուր Ավագյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բնագավառ,<br>4 Հողօգտագործման բնագավառ,<br>5 Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ,<br>6 Արտակարգ իրավիճակների և քաղ. պաշտպանության բնագավառ,<br>7 Սոցիալական պաշտպանության բնագավառ,<br>8 Տրանսպորտի բնագավառ<br>9 Կոմունալ տնտեսության բնագավառ<br>10 Մշակույթի և սպորտի բնագավառ<br>11 Կրթության բնագավառ<br>12 Առողջապահության բնագավառ<br>13 Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառ<br>14 Զբոսաշրջության բնագավառ | 3 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետ<br>4 Հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ<br>5 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ<br>6 Ջրահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետ<br>7 Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ<br>8 Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և կապի բաժնի գլխավոր մասնագետ<br>9 Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ<br>10 ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի | 4 Գրիգոր Մանուկյան<br>5 Արթուր Շուխյան<br>6 Գայանե Անդրեասյան<br>7 Կարեն Թաթուլյան<br>8 Արշակ Ղազարյան<br>9 Գայանե Սահակյան<br>10 Սոֆյա Վարդազարյան<br>11 Արմինե Սիմոնյան<br>12 Մերի Շահազիզյան<br>13 Թելման Թովմասյան<br>14 Գագիկ Պողոսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | բաժնի ավագ մասնագետ<br>11 ԿՄՍ վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ<br><br>12 Առողջապահության բաժնի պետ<br>13 Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ<br>14 Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ | |

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022թ. դեկտեմբերի 14-ին, N 464-Ա                                   ք. Աշտարակ

## ՄԱԼԽԱՍ ՇԻՐԻՆԻ ԱԼՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՎՇԵՆԻ ՄԱՔՍԻՄ ԽԱՄՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ավշենի Մաքսիմ Խամոյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի դեկտեմբերի 9-ին անցկացված մրցույթի արդյունքները և Մ. Ալոյանի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Մալխաս Շիրինի Ալոյանին 2022 թվականի դեկտեմբերի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ավշենի Մաքսիմ Խամոյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 12/15/2022 11:09:06 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2022թ. դեկտեմբերի 14-ին, N 463-Ա
ք. Աշտարակ

ԶԱՐԶԱՆԴ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՎՇԵՆԻ ՄԱՔՍԻՄ ԽԱՄՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

Զարզանդ Մուրադյանին 2022 թվականի դեկտեմբերի 14-ից ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ավշենի Մաքսիմ Խամոյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից՝ լուծելով 2022 թվականի նոյեմբերի 10-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

X

VERIFIED OCSP 12/15/2022 11:06:21 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**2022թ. դեկտեմբերի** 13 **-ին, N** 462 **-Ա**
**ք. Աշտարակ**

ՀՌԻՓՍԻՄԵ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԱՐԾԱԿԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծարծակիսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2022 թվականի դեկտեմբերի 9-ին անցկացված մրցույթի արդյունքները և Հ. Ավետիսյանի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

Հռիփսիմե Ավետիսյանին 2022 թվականի դեկտեմբերի 14-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծարծակիսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

X

VERIFIED OCSP 12/13/2022 16:50:58 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**2022 թ. դեկտեմբերի** 9 N 461-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «բ)» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե)» կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված պլանով նախատեսված միջոցառումների կատարումը և հսկողություն իրականացնել միջոցառումների կատարման նկատմամբ:

X

VERIFIED OCSP 12/12/2022 10:10:09 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
«09» 12 2022թ. N 461-Ա որոշման

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | I. ԱԻՆ ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | |
| | **1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | |
| | **1.1 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | |
| 1.1.1 | Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով | Փետրվար, օգոստոս | Արագածոտնի մարզպետ ՄՓՎ պետ | | Մարզի ղեկավար կազմ, ՄՓՎ | |
| | **2. Ընդհանուր պատրաստություն** | | | | | |
| 2.1 | Մասնակցություն պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար պարապմունքների անցկացմանը | Յուրաքանչ-յուր կիսամյակ | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | | Մարզպետարանի համապատասխան վարչություններ, ՄՓՎ | |
| | **3. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | |
| 3.1 | Մասնակցություն ՀՀ վարչապետի 2019թ. հուլիսի 16-ի «Օպերատիվ աշխատանքային խումբ (շտաբ) ստեղծելու, դրա աշխատակարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2010թ. օգոստոսի 17-ի N 651-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 934-Ա որոշման 1-ին կետով հաստատված օպերատիվ աշխատանքային խմբի (շտաբի) աշխատանքային նիստերին (ըստ առնչության) | Տարվա ընթացքում | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | | Մարզպետարանի համապատասխան վարչություններ, ՄՓՎ | |
| 3.2 | Մասնակցություն ՀՀ Արագածոտնի մարզի | Տարվա | ՀՀ | | ՄՓՎ ստորաբաժա- | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարածքում քիմիապես վտանգավոր օբյեկտների, ինչպես նաև քիմիական թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը | ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | | նումներ՝ ըստ առնչության | |
| **4. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 4.1 | Մասնակցություն ՄՓՎ ստորաբաժանումների ծառայողների և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացին | Տարվա ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ, Մարզպետարանի համապատասխան վարչություններ, մարզի կրթական հաստատություններ | | |
| | Մասնակցություն պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև հանրապետական առաջնությանը | Ապրիլ | | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Մարզի պատանի հրշեջ-փրկարարական թիմեր | |
| **II ՓԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **5.Օպերատիվ տակտիկական պատրաստություն** | | | | | | |
| **5.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 5.1.1 | «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով | 18.10 | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | Արագածոտնի ՄՓՎ, Արագածոտնի մարզպետարան, մարզի ծառայություններ տարահանման հանձնաժողով, | |
| **5.2 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 5.2.1 | «ՔՊ միջոցառումների կազմակերպումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ» թեմայով | 20.04 | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | Արագածոտնի ՄՓՎ, Արագածոտնի մարզպետարան, մարզի ՔՊ ծառայություններ, մարզի տարահանման հանձնաժողով, | |
| 5.2.3 | Մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացմանը | Տարվա ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Համայնքների ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հրամանատարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի դեպքում» թեմայով | 16.03 | ՄՓՎ պետ, Աշտարակ համայնքի ղեկավար | Համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, համայնքի վարչական ղեկավարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «ՀՀ Արագածոտնի մարզում ուժեղ երկրաշարժի ծագման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով | 03.05 | ՄՓՎ պետ, Ապարան համայնքի ղեկավար | | | |
| | «ՔՊ միջոցառումների կազմակերպումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ» թեմայով | 13.07 | ՄՓՎ պետ, Օթևան համայնքի ղեկավար | | | |
| | | 26.07 | ՄՓՎ պետ, Թալին համայնքի ղեկավար | | | |
| | | 23.08 | ՄՓՎ պետ, Արևուտ համայնքի ղեկավար | | | |
| | | 11.10 | ՄՓՎ պետ, Ծաղկահովիտ համայնքի ղեկավար | Համայնքի ղեկավար կազմ | Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ, համայնքի վարչական ղեկավարներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | | 25.10 | ՄՓՎ պետ, Ալագյազ համայնքի ղեկավար | | | |
| | | 16.11 | ՄՓՎ պետ, Շամիրամ | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | համայնքի ղեկավար | | | |
| **5.3 Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 5.3.1 | ք.Թալին, Քոթանյան 11 բազմաբնակարան շենքում «Փրկարարական և որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացում | 14.09 | Արագածոտնի մարզպետ, Արագածոտնի ՄՓՎ պետ, | Արագածոտնի ՄՓՎ | Արագածոտնի ՄՓՎ Թալինի ՀՓՋ-ից երկու մարտական հաշվարկ, Թալինի ոստիկանության բաժնից ՕԽ, «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ օգնության ծառայության գծային բրիգադ, «ՀԷՑ» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Թալինի ՇԷՑ և «Գազպրոմ Արմենիա» ԳԳՄ Թալինի ՏՏ-ի արձագանքող ուժեր | |
| **5.4 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| | Մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն մարզի կազմակերպությունների կողմից հատուկ տակտիկական ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում | Տարվա ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Կազմակեր-պությունների ղեկավար կազմ | Կազմակերպության կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 5.4.1 | «Կապի համակարգի վթարի դեպքում վթարավերականգնողական խմբերի գործողությունները» թեմայով | 23.02 | ՄՓՎ պետ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ցանցերի շահագործման թիմի ղեկավար | «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ցանցերի շահագործման թիմ | «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ցանցերի շահագործման թիմի վթարավերականգ-նողական խումբ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «Բազմաբնակարան շենքերում էներգամատակարարման համակարգի վթարի դեպքում վթարային բրիգադի գործողությունները» | 21.03 | ՄՓՎ պետ, ՀԷՑ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ | ՀԷՑ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ Ապարանի էլ.ցանց | ՀԷՑ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ Ապարանի էլ.ցանցի վթարավերա- | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թեմայով | | Ապարանի էլ.ցանցի ղեկավար | | կանգնողական խումբ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով | 27.04 | ՄՓՎ պետ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ Թալինի ՏՏ պետ | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ Թալինի ՏՏ | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արագածոտնի ԳԳՄ Թալինի ՏՏ վթարավերականգ-նողական խումբ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «Քիմիական վտանգավոր օբյեկտում արտադրական վթարի դեպքում անձնակազմի և հարակից բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացում» թեմայով | 21.12 | ՄՓՎ պետ, «Թամարա Ֆրութ» ՓԲԸ տնօրեն | «Թամարա Ֆրութ» ՓԲԸ ղեկավար կազմ | «Թամարա Ֆրութ» ՓԲԸ կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 5.4.2 | Մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն մարզի ճանապարհաշինարարական, վերանորոգման և սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների կողմից ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում | Տարվա ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՓԾ տարածքային ստորաբաժա-նումներ | Համապատասխան կազմակերպություններ | |
| | «Ձնաբքերի պատճառով արգելափակված ճանապարհների մաքրում» թեմայով | 15.02 | ՄՓՎ պետ «Թալինի ԱՏՃ» ՓԲԸ տնօրեն | «Թալինի ԱՏՃ» ՓԲԸ ղեկավար կազմ | «Թալինի ԱՏՃ» ՓԲԸ կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | | 15.12 | ՄՓՎ պետ, «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ տնօրեն | «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ ղեկավար կազմ | «Հովհանես Մարտիրոսյան» ՍՊԸ կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 5.4.3 | ՀՀ Արագածոտնի մարզի կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում (յուրաքանչյուր ՀՓՋ եռամսյակը մեկ անգամ) | Եռամսյակում 4 հատ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Համապատասխան կազմակերպություննե ր | |
| | «Հրդեհաշիջման, տարահանման և առաջին օգնության կազմակերպումը» թեմայով | 27.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Աշտարակի թիվ 19 ՀՓՋ | 1-ին խումբ, Աղձքի միջնակարգ դպրոց | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 19.05 | | հրամանատար | 2-րդ խումբ, Ոսկեվազի միջնակարգ դպրոց | |
| | | 29.09 | | | 3-րդ խումբ, Ոէշիի միջնակարգ դպրոց | |
| | | 29.11 | | | 4-րդ խումբ, Ոէջանի միջնակարգ դպրոց | |
| | «Հրդեհաշիջման, տարահանման և առաջին օգնության կազմակերպումը» թեմայով | 23.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Ապարանի թիվ 20 ՀՓՋ հրամանատար | 1-ին հերթափոխ, Ապարան քաղաքի ավագ դպրոց | |
| | | 15.05 | | | 2-րդ հերթափոխ, Ապարանի թիվ 2 միջնակարգ դպրոց | |
| | | 25.09 | | | 3-րդ հերթափոխ, Ապարանի Վարդանանց ասպետներ մանկապարտեզ | |
| | | 17.11 | | | 4-րդ հերթափոխ, Քուչակի միջնակարգ դպրոց | |
| | «Հրդեհաշիջման, տարահանման և առաջին օգնության կազմակերպումը» թեմայով | 15.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Արագածի թիվ 21 ՀՓՋ հրամանատար | 1-ին հերթափոխ, Ալագյազի միջնակարգ դպրոց | |
| | | 11.05 | | | 2-րդ հերթափոխ, Նորաշենի միջնակարգ դպրոց | |
| | | 29.09 | | | 3-րդ հերթափոխ, Ծիլքարի միջնակարգ դպրոց | |
| | | 21.11 | | | 4-րդ հերթափոխ, Կանիաշիրի միջնակարգ դպրոց | |
| | «Հրդեհաշիջման, տարահանման և առաջին օգնության կազմակերպումը» թեմայով | 23.03 | ՄՓՎ պետ | ՄՓՎ Թալինի թիվ 22 ՀՓՋ հրամանատար | 1-ին հերթափոխ, Դաշտադեմի միջնակարգ դպրոց | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 19.05 | | | 2-րդ հերթափոխ, Կարմրաշենի միջնակարգ դպրոց | |
| | | 25.09 | | | 3-րդ հերթափոխ, Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց | |
| | | 15.11 | | | 4-րդ հերթափոխ, Աշնակի միջնակարգ դպրոց | |
| 5.4.4 | ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 01-06.03 | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| | «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում ազդարարման, տարահանման և պատսպարման միջոցառումների իրականացումը» թեմայով | 01.03 | ՄՓՎ պետ, Դաշտադեմի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Դաշտադեմի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 02.03 | ՄՓՎ պետ, Վարդաբլուրի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Վարդաբլուրի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 03.03 | ՄՓՎ պետ, Սասունիկի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Սասունիկի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 06.03 | ՄՓՎ պետ, Կարբիի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Կարբիի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 06.03 | ՄՓՎ պետ, Շենավանի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Շենավանի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| 5.4.5 | Մարզի ուսումնական հաստատություններում ՔՊ միջազգային օրվան նվիրված դասախոսությունների անցկացում | 01-06.03 | Արագածոտնի մարզպետ, Ուսումնական հաստատության տնօրեն | Ուսումնական հաստատության ուսուցչական, դասախոսական կազմ | Ուսումնական հաստատության ուսանողներ, աշակերտներ | |
| 5.4.6 | ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում | 04-08.09 | Արագածոտնի մարզպետ, Ուսումնական հաստատության տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ուսումնական հաստատությունների անձնակազմ | |
| | «Տարահանման միջոցառումների իրականացումը» թեմայով | 05.09 | ՄՓՎ պետ, Մուղնու հիմնական դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Մուղնու հիմնական դպրոցի անձնակազմ | |
| | | 06.09 | ՄՓՎ պետ, Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ագարակի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 06.09 | ՄՓՎ պետ, Թալինի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Թալինի թիվ 2 միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 07.09 | ՄՓՎ պետ, Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 08.09 | ՄՓՎ պետ, Վարդենիսի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Վարդենիսի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | Մարզի համայնքներում և կազմակերպություններում էլ. շչակի գործարկմամբ գործնական պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Համայնքների և կազմակերպությունների ղեկավար կազմ | Համայնքների և կազմակերպությունների անձնակազմ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| 5.4.7 | «Ազդարարում, պատսպարում, տարահանում» թեմայով | 14.02 | ՄՓՎ պետ, Թալինի համայնքի ղեկավար | ՄՓՎ ստորաբաժանումներ | Թալինի համայնքապետարանի անձնակազմ | |
| | | 14.03 | ՄՓՎ պետ, Բյուրականի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժանումներ | Բյուրական գյուղի բնակչություն | |
| | | 14.04 | ՄՓՎ պետ, Ագարակի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժանումներ | Ագարակ գյուղի բնակչություն | |
| | | 07.06 | ՄՓՎ պետ, Ակունքի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժանումներ | Ակունք գյուղի բնակչություն | |
| | | 08.06 | ՄՓՎ պետ, Կոշի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժանումներ | Կոշ գյուղի բնակչություն | |
| | | 06.07 | ՄՓՎ պետ, Շամիրամի հիմնական դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժանումներ | Շամիրամի հիմնական դպրոցի անձնակազմ | |
| | | 10.07 | ՄՓՎ պետ, Նոր Եղեսիաի | ՄՓՎ ստորաբաժանումներ | Նոր Եղեսիայ գյուղի բնակչություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | վարչական ղեկավար | | | |
| | | 19.07 | ՄՓՎ պետ, Գեղարոտի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Գեղարոտ գյուղի բնակչություն | |
| | | 20.07 | ՄՓՎ պետ, Մելիքգյուղի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Մելիքգյուղ գյուղի բնակչություն | |
| | | 08.08 | ՄՓՎ պետ, Գետափի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Գետափ գյուղի բնակչություն | |
| | «Ազդարարում, պատսպարում, տարահանում» թեմայով | 15.08 | ՄՓՎ պետ, Նոր Արթիկի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Նոր Արթիկի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 30.08 | ՄՓՎ պետ, Արտենիի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Արտենի գյուղի բնակչություն | |
| | | 20.09 | ՄՓՎ պետ, Թլիկի հիմնական դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Թլիկի հիմնական դպրոցի անձնակազմ | |
| | | 27.09 | ՄՓՎ պետ, Արագածավանի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Արագածավան գյուղի բնակչություն | |
| | | 06.10 | ՄՓՎ պետ, Ծիլքարի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ծիլքար գյուղի բնակչություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | «Ազդարարում, պատսպարում, տարահանում» թեմայով | 12.10 | ՄՓՎ պետ, Հակոյի հիմնական դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Հակոյի հիմնական դպրոցի անձնակազմ | |
| | | 18.10 | ՄՓՎ պետ, Ոհջանի վարչական ղեկավար | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ոհջան գյուղի բնակչություն | |
| | | 27.10 | ՄՓՎ պետ, Ուշիի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ուշիի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 14.11 | ՄՓՎ պետ, Օրգովի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Օրգովի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 24.11 | ՄՓՎ պետ, Ռյա-Թազաի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ռյա-Թազաի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| 5.4.8 | «Աղետներին դիմակայունության օր» խորագրով միջոցառումների անցկացում | 07-12.12 | ՄՓՎ պետ, կազմակերպութ-յունների ղեկավարներ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Համապատասխան կազմակերպություն-ների անձնակազմ | |
| | «Ուժեղ երկրաշարժի ծագման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» | 07.12 | ՄՓՎ պետ, Գեղարոտի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Գեղարոտի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 08.12 | ՄՓՎ պետ, Ներքին Բազմաբերդի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ներքին Բազմաբերդի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թեմայով դասախոսություն | 08.12 | ՄՓՎ պետ, Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 11.12 | ՄՓՎ պետ, Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի անձնակազմ | |
| | | 12.12 | ՄՓՎ պետ, Թթուջրի հիմնական դպրոցի տնօրեն | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Թթուջրի հիմնական դպրոցի անձնակազմ | |
| | **5.5 Օբյեկտային վարժանք** | | | | | |
| 5.5.1 | Մեթոդական օգնության ցուցաբերում և մասնակցություն մարզի բժշկական կենտրոնների կողմից օբյեկտային վարժանքների նախապատրաստման և անցկացման գործում | Տարվա ընթացքում | ՀՀ Արագածոտնի մարզպետ, Բժշկական կենտրոնների տնօրեններ | Բժշկական կենտրոնների ղեկավար կազմ | Բժշկական կենտրոնների անձնակազմ, կազմավորումներ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | «Հիվանդների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով | 18.05 | ՄՓՎ պետ «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը տնօրեն | «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը ղեկավար կազմ | «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ անձնակազմ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | | 15.06 | «Ծաղկահո-վիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն | «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ ղեկավար կազմ | «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ անձնակազմ, ՄՓՎ ներկայացուցիչ | |
| | **6. Ընդհանուր պատրաստություն** | | | | | |
| 6.1 | ՀՀ մարզային ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում | Տարվա ընթացքում | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՔՊ ծառայությունների շտաբի պետեր | |
| | «Վտանգավոր տարածքից բնակչության | 28.03 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՔՊ ծառայությունների | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.08.2011թ. N1180-Ն որոշման ուսումնասիրում | | | | շտաբի պետեր | |
| | «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.09.2000թ. N592 որոշման ուսումնասիրում | 27.06 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՔՊ ծառայությունների շտաբի պետեր | |
| | Արագածոտնի մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների քաղաքացիական պաշտպանության պլանների ուսումնասիրում | 26.09 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՔՊ ծառայությունների շտաբի պետեր | |
| | 1. Տարահանման մարմիններին առաջադրված խնդիրների և դրանց կառուցվածքի ուսումնասիրում<br>2. Արագածոտնի մարզի բնակչության տարահանման պլանի ուսումնասիրում | 19.12 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՔՊ ծառայությունների շտաբի պետեր | |
| 6.2 | Մարզային ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման վերաբերյալ զեկույցի ներկայացում ՔՊՎ | 31.03<br>30.06<br>29.09<br>22.12 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | | |
| **7. Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ** | | | | | | |
| 7.1 | Արագածոտնի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը գարնանային վարարումների և սելավների ռիսկերից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մինչև 15.02 | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| 7.2 | Մարզի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի վերաբերյալ տվյալների հավաքագրում, Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կանխատեսումների հիման վրա հրատապ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | Մարտ-հունիս | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7.3 | Մարզի տարածքում առաջացած բնական բնույթի վտանգների ու վտանգավոր երևույթների ուսումնասիրության իրականացում, դրանց սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին առաջարկությունների ներկայացում | Տարվա ընթացքում | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| **8. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 8.1 | Ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացում | Տարվա ընթացքում | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| 8.2 | Ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, Պաշտպանության նախարարությանը չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| 8.3 | Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարահանման պլանների ճշգրտում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| 8.4 | Ջրահավաքային նախապատրաստության հարցերով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերման աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ ստորաբաժանումներ, ՊՆ տարածքային ստորաբաժանումներ | |
| 8.5 | Մարզի բազմաբնակարան շենքերի, մասնավոր տների, կազմակերպությունների նկուղային հարկերի վիճակի ուսումնասիրությունների իրականացում | Տարվա ընթացքում | | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |
| **9. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | | |
| 9.1 | Մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի միջև մարզային առաջնությունների կազմակերպում և անցկացում | Մարտ | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Մարզի պատանի հրշեջ-փրկարարական թիմեր | |
| | Մարզում պատանի հրշեջ-փրկարարական թիմերի ստեղծման և ուսուցման կազմակերպման վերաբերյալ զեկույցի ներկայացում | 11.07<br>13.12 | | Արագածոտնի ՄՓՎ | | |
| 9.2 | Մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում. համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում | | | | | |
| 9.3 | Արտակարգ իրավիճակների նախարարի 2020թ. մարտի 12-ի թիվ 348-Լ և Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. մարտի 23-ի թիվ 104-Լ «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլան»-ի համատեղ հրամանի պահանջների կատարում | Մինչև 31.03 | | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | | |
| 9.4 | ՀՀ Արագածոտնի մարզի ավտոճանապարհներին ձնաբքի ժամանակ մարդկանց և տրանսպորտային միջոցներն անվտանգ տարածք տեղափոխելու նպատակով առաջնային օգնության կետերի (տնակների) ծավալում (տեղադրում) | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ | ԱԻ նախարարի 18.11.2022թ. թիվ 1326-Լ հրամանի համաձայն | |
| | **10. Իրավական, օրենսդրական բազայի կատարելագործման ուղղությամբ** | | | | | |
| 10.1 | ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 23.03.2022թ. «ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության ծրագրից բխող ԱԻՆ ՓԾ ոլորտային միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 17/436-Լ հրամանով սահմանված միջոցառումների կատարում | Առանձին պլան-ժամանակա-ցույցով | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ՝ ըստ առնչության | | |
| 10.2 | ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ 2022-2024թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1568-Լ որոշմամբ սահմանված միջոցառումների կատարում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբա-ժանումներ՝ ըստ առնչության | | |
| | **11. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | |
| 11.1 | Մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի մշակում | Մինչև 23.11 | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11.2 | Աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման և ներդրման ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | Մարզի համայնքներ, կազմակերպություն-ներ | |
| 11.3 | Մասնակցություն ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի կառավարման մարմինների ու կազմավորումների ուժերի և միջոցների համատեղ պատրաստման 2023թ. պլանով սահմանված միջոցառումների կատարմանը | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | | ՄՓՎ ստորաբաժա-նումներ՝ ըստ առնչության | |
| 11.4 | «Հայաստան-ՆԱՏՕ 2023թթ. Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով» նախատեսված միջոցառումների կատարում | Տարվա ընթացքում | ՄՓՎ պետ | | ՄՓՎ ստորաբաժա-նումներ՝ ըստ առնչության | |
| 11.5 | Համայնքների և կազմակերպությունների ՔՊ պլանների ու պլան-ժամանակացույցերի ճշգրտում | Մինչև 10.03 | ՀՀ Արագածոտնի մարզպետ, ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | Մարզպետարանի համապատասխան վարչություններ, համայնքներ, կազմակերպություն-ներ | |
| 11.6 | «Մարզի քաղաքացիական պաշտպանության պլան»-ի ճշգրտում | Մինչև 20.06 | | | | |
| 11.7 | «Մարզի բնակչության տարահանման պլան»-ի ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| 11.8 | Արտակարգ իրավիճակներում գործելու (աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու) պլանների ճշգրտում | Տարվա ընթացքում | | | | |
| | 12. Զորահավաքային պատրաստություն | | | | | |
| 12.1 | Զորահավաքային պատրաստության միջոցառումներ | Առանձին պլան-ժամանակա-ցույցով | ՄՓՎ պետ | Արագածոտնի ՄՓՎ | ՀՀ ՊՆ ԶԶՀԾ Արագածոտնի տարածքային ստորաբաժանում | |

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ